«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

2020թ.

Scanned with ACE Scanner

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

ՈՐՈՇՈՒՄ N 56

«30» 08 2020թ. ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի Ուսանողական խորհրդի կանոնադրությունը:

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ Լ.ԱԼԱԲԵԿՅԱՆ _____
(ստորագրություն)

Քարտուղար՝ ԴԱՎԻԹ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ _____
(ստորագրություն)

Scanned with ACE Scanner

Հաստատված է
«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի
2020թ. «ապրիլ» «30» N 56 որոշմամբ

Ընդունված է
Գորիսի պետական քոլեջի Ուսանողական խորհրդի
2020թ. մարտի 18-ին կայացած ընդհանուր ժողովում
ՈՒԽ նախագահ՝ Հ. Հայրապետյան
ՈՒԽ քարտուղար՝ Հ. Դալլաքյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1.1. Գորիսի պետական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ԳՊՔ ՈՒԽ) ԳՊՔ ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման և ուսանողների շահերը ներկայացնող բարձրագույն ընտրովի մարմինն է:

1.2. ԳՊՔ ՈՒԽ-ն ապաքաղաքական և ապակուսակցական կազմակերպություն է:

1.3. ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, հետազոտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

1.4. ԳՊՔ ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ գործող օրենսդրության, ԳՊՔ կանոնադրության և սույն կանոնադրության համապատասխան:

1.5. ԳՊՔ ՈՒԽ-ի լրիվ անվանումն է՝ հայերեն՝ Գորիսի պետական քոլեջի ուսանողական խորհուրդ, ռուսերեն՝ Студенческий совет Горисского государственного колледжа, անգլերեն՝ Student Council of the Goris State College:

1.6. ԳՊՔ ՈՒԽ-ի հասցեն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Հայկազունիների 4:

1.7. Սույն կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում ու հավանությանն են արժանանում Ուսանողական խորհրդի ընդհանուր ժողովի կողմից և հաստատվում է ԳՊՔ Կառավարման խորհրդի որոշմամբ:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ԳՊՔ ՈՒԽ-ի նպատակն է՝

ա) պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,

բ) ապահովել ուսանողների մասնակցությունը քոլեջի կառավարմանը,

գ) Քոլեջի կառավարման համապատասխան մարմիններին ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,

դ) մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,

Scanned with ACE Scanner

ե) իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին,

զ) միավորել Քոլեջի ուսանողների ջանքերը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու խթանելու ուսանողների հետազոտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը,

ը) աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,

թ) մասնակցել ԳՊՔ տարածքում ներքին կարգապահության պահպանմանը,

ժ) ինչպես նաև զբաղվել ուսանողներին հուզող այն խնդիրներով, որոնք նախատեսված չեն սույն կանոնադրությամբ:

2.2. ԳՊՔ ՈւԽ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով նշված նպատակներից ու խնդիրներից: Այն համագործակցում է ՀՀ-ում գործող բուհական, մմուհական, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ՝ փոխհարաբերությունները կառուցելով պայմանագրային և համագործակցության ու փոխշահավետության հիմունքներով:

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

3.1. ԳՊՔ ՈւԽ բարձրագույն մարմինը ՈւԽ Ընդհանուր ժողովն է: Ընդհանուր ժողովին լիիրավ ձայնի իրավունքով մասնակցում են Քոլեջի ուսանողները:

3.2. Ընդհանուր ժողովի պատվիրակների կազմը համալրվում է տարին մեկ անգամ:

3.3. Ընդհանուր ժողովը գումարվում է ուսումնական տարվա սկզբին:

3.4. Ընդհանուր ժողովում պատվիրակների 50% +1 մասնակցության դեպքում քվորումն առկա է և նիստը՝ իրավազոր:

3.5. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

3.6. Ընդհանուր ժողովի քննարկման հարցերն են.

ա) հավանության արժանացնել ՈւԽ կանոնադրությունը, փոփոխությունները և լրացումներ կատարել նրանում,

բ) հաստատել ՈւԽ նախագահության կազմը (բաց քվեարկությամբ)

գ) լսել և հաստատել ՈւԽ նախագահության տարեկան հաշվետվությունը,

դ) քննարկել և սահմանել ՈւԽ-ի տարեկան գործունեության կարևորագույն ուղղությունները և առաջիկա տարվա ծրագրային առաջնայնությունները

ե) որոշում կայացնել ՈւԽ-ի վերակազմավորման վերաբերյալ:

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1. Ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում ՈւԽ աշխատանքները ղեկավարում է ԳՊՔ ՈւԽ նախագահությունը:

4.2. Յուրաքանչյուր մասնագիտություն կուրսղեկական ժողովի ընթացքում իր ուսանողների կազմից ընտրում է ԳՊՔ ՈւԽ նախագահության ներկայացուցիչներ՝ պահպանելով սույն կանոնակարգի 4.5 կետի պահանջները:

4.3. ՈւԽ նախագահության անդամները 2 տարի ժամկետով հաստատվում են Ընդհանուր ժողովի կողմից:

Scanned with ACE Scanner

4.4. ՈւԽ նախագահության անդամ կարող են ընտրվել միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կուրսերի ուսանողները:

4.5. Նախագահության անդամներն ընտրվում են ըստ համամասնության, մինչև 10 ուսանող ունեցող մասնագիտություններից՝ 1 անդամ, 20-ից ավելի ուսանող ունեցող մասնագիտություններից՝ 2 և ավելի անդամներ:

4.6. ՈւԽ նախագահությունն իր կազմից երկու տարի ժամկետով ընտրում է ՈւԽ նախագահ, փոխնախագահ, քարտուղար, հանձնաժողովների նախագահներ:

4.7. ՈւԽ նախագահը չի կարող առաջադրվել ՀՀ որևէ քաղաքական կուսակցությանն անդամակցող թեկնածու:

4.8. ՈւԽ նախագահի ընտրությունը կատարվում է փակ, գաղտնի քվեարկությամբ: Փոխնախագահի, պատասխանատու քարտուղարի, հանձնաժողովների նախագահների ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ, եթե այդ մասին այլ որոշում նախագահության կողմից չի կայացվում:

4.9. Ընտրված է համարվում նախագահի այն թեկնածուն, ում օգտին քվեարկում են ներկաների կեսից ավելին (50% +1 ձայն): Անհրաժեշտ թվով ձայներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուները անցնում են երկրորդ փուլ: Երկրորդ փուլում ընտրվում է այն թեկնածուն, ում օգտին քվեարկում է ներկաների մեծամասնությունը: Հավասար ձայների դեպքում ընտրությունն իրականացվում է երկրորդ անգամ՝ նախորդ ընտրությունից 1 շաբաթ հետո՝ պահպանելով սույն կետի պահանջները:

4.10. Ընտրված են համարվում փոխնախագահի, պատասխանատու քարտուղարի, հանձնաժողովների նախագահների այն թեկնածուները, որոնց օգտին քվեարկում են ներկաների կեսից ավելին (50% +1 ձայն): Անհրաժեշտ թվով ձայներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուները անցնում են երկրորդ փուլ: Երկրորդ փուլում ընտրվում է այն թեկնածուն, ում օգտին քվեարկում է ներկաների մեծամասնությունը: Հավասար ձայների դեպքում ընտրությունն իրականացվում է երկրորդ անգամ՝ նախորդ ընտրությունից 1 շաբաթ հետո՝ պահպանելով սույն կետի պահանջները:

4.11. ՈւԽ նախագահի, փոխնախագահի, պատասխանատու քարտուղարի, հանձնաժողովների նախագահների պարտականությունները չիրականացնող ԳՊՔ ՈւԽ նախագահության մյուս անդամներն ընդգրկվում են ուսանողական խորհրդի նախագահությունում գործող հանձնաժողովներում:

4.12. ՈւԽ նախագահության անդամի հեռացման (այդ թվում՝ քոլեջից հեռացման), քոլեջն ավարտելու, կամովի հրաժարվելու դեպքում՝ սույն կարգի 4.2 կետի պահանջներին համապատասխան ընտրվում է ԳՊՔ ՈւԽ նախագահության նոր ներկայացուցիչ՝ պահպանելով սույն կանոնակարգի 4.5 կետի պահանջները: Եթե ՈւԽ նախագահության անդամը փոխնախագահ կամ պատասխանատու քարտուղար կամ հանձնաժողովի նախագահ է, ապա ընտրությունն իրականացվում է հաշվի առնելով սույն կանոնակարգի 4.2, 4.5, 4.8, 4.10 կետերի պահանջները:

4.13. ՈւԽ նախագահության անդամների կեսից ավելիի փոփոխության պարագայում կազմակերպվում է ՈւԽ նախագահի նոր ընտրություն:

4.14. ԳՊՔ ՈւԽ նախագահը, ով հանդիսանում է նաև ԳՊՔ ՈւԽ նախագահության նախագահ, ներկայացնում է ՈւԽ-ն ԳՊՔ Մանկավարժական խորհրդում, Ուսումնական մասում և Քոլեջի այլ օղակներում, ՈւԽ Ընդհանուր ժողովում հանդես է գալիս Ուսանողական խորհրդի գործունեության մասին հաշվետվությամբ: Նա ներկայացնում է ԳՊՔ ՈւԽ-ն և ուսանողությունը ՀՀ և արտերկրի բոլոր պետական և ոչ պետական մարմիններում, մասնավոր անձանց, տալիս է լիազորագրեր՝ գործելով սույն կանոնադրությամբ ՈւԽ-ին վերապահված հարցերի շրջանակներում:

Scanned with ACE Scanner

4.15. Ուսանողական խորհրդի ընդհանուր ժողովի, նախագահության, քարտուղարության և առանձին հանձնաժողովների նիստերին 3 անգամ չմասնակցած ՈՒԽ նախագահության անդամը հեռացվում է ԳՊՔ Ուսանողական խորհրդի կազմից:

4.16. Սահմանված ժամկետը լրանալու կամ ԳՊՔ-ում ուսումն ավարտելուց կամ բանակ զորակոչվելուց ԳՊՔ ՈՒԽ նախագահը վայր է դնում իր լիազորությունները: Ընտրությունն իրականացվում է սույն կարգի 4.8, 4.9 կետերի պահանջներին համապատասխան նախագահի լիազորությունների վայր դնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում:

4.17. ԳՊՔ ՈՒԽ փոխնախագահը նախագահի բացակայության ժամանակ վերջինիս լիազորությամբ ողջ ծավալով կատարում է նախագահի պարտականությունները: Նախագահի լիազորությունները դադարելու դեպքում ԳՊՔ ՈՒԽ փոխնախագահն իրականացնում է նախագահի պարտականությունները՝ մինչև նոր նախագահի ընտրությունը:

4.18. Պատասխանատու քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները, վարում համապատասխան արձանագրությունները:

4.19. ՈՒԽ նախագահությունը.

ա) միջոցներ է ձեռնարկում ՈՒԽ Ընդհանուր ժողովի որոշումներն իրականացնելու համար,

բ) հաստատում է ՈՒԽ նախագահության, քարտուղարության, հանձնաժողովների աշխատակարգերը,

գ) վավերացնում է ՈՒԽ նախագահի կողմից կնքված պայմանագրերն ու համաձայնագրերը

դ) հանձնաժողովներում կատարվող աշխատանքների մասին լսում է զեկուցումներ

ե) կանոնակարգում է ԳՊՔ կառավարման բոլոր մարմիններում ուսանողների առաջադրման և ընտրության գործընթացը և ընտրում է ԳՊՔ կառավարմանը մասնակցող ուսանող անդամներին, ինչպես նաև որոշումներ է ընդունում կառավարման տարբեր մարմիններում ուսանողների ներկայացուցիչներին առնչվող այլ հարցերի վերաբերյալ,

զ) կարող է անվստահություն հայտնել ՈՒԽ նախագահին, նախագահության անդամներին և հանձնաժողովների նախագահներին,

է) կարող է լսել և լուծել ՈՒԽ իրավասությանը վերաբերող ցանկացած հարց, բացառությամբ Ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահվածներից:

ը) առաջարկում է փոփոխություններ, լրացումներ ՈՒԽ կանոնադրության մեջ:

4.20. Ուսանողական խորհրդի նախագահությունում գործում են.

- Կազմակերպման, մշակույթի և ազատ ժամանցի հանձնաժողովը
- Կրթության, ուսուցման և սպորտի հանձնաժողովը
- Արտաքին կապերի հանձնաժողովը
- Մամուլի և լրատվության հանձնաժողովը

Անհրաժեշտության դեպքում կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ:

4.21. Ուսանողական խորհրդի նախագահությունում գործող հանձնաժողովներում կարող են ընդգրկված լինել նախագահը և նվազագույնը երկու, առավելագույնը՝ տաս անդամ:

4.22. ԳՊՔ ՈՒԽ նախագահությունը նիստեր է գումարում առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

4.23. ԳՊՔ ՈՒԽ նախագահությունը՝ բաց քվեարկությամբ, ձայների մեծամասնությամբ իր կազմից ընտրում է ԳՊՔ Ուսումնամեթոդական խորհրդում 1 ներկայացուցիչ (ուսանող-անդամ):

4.24. ԳՊՔ ՈՒԽ նախագահությունը՝ բաց քվեարկությամբ, ձայների մեծամասնությամբ իր կազմից լիազորված մարմնին առաջադրում է 3 ուսանող-անդամի թեկնածություն՝ ԳՊՔ Կառավարման խորհրդի կազմում ընդգրկվելու համար:

4.25. ԳՊՔ ՈՒԽ նախագահության նիստն իրավազոր է, եթե ներկա են անդամների 50%+1 անդամները: Որոշումներն ընդունվում են ներկաների պարզ մեծամասնությամբ: Փակ, գաղտնի քվեարկության արդյունքում, եթե անդամների 2/3-ը պաշտպանում է անվստահության քվեն, ապա համապատասխան անձը վայր է դնում իր լիազորությունները:

Scanned with ACE Scanner

4.26. ԳՊՔ ՈւԽ նախագահի որոշմամբ կամ նախագահության անդամների 1/2-ի պահանջով կարող է հրավիրվել ԳՊՔ ՈւԽ նախագահության արտահերթ նիստ:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1. Ուսանողական խորհրդի ֆինանսական միջոցները գոյանում են ԳՊՔ հատկացումներից, հանգանակություններից, նվիրատվություններից և ԳՊՔ Կանոնադրությանը, սույն կանոնադրությանը չհակասող այլ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներից:

6. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

6.1. Վերստուգիչ հանձնաժողովն իրականացնում է Ուսանողական խորհրդի որոշումների կանոնակարգային համապատասխանության և ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողությունը:

6.2. Հանձնաժողովի կազմը (ընդհանուր թվով երեք հոգի) ընտրվում է ՈւԽ Ընդհանուր ժողովի կողմից՝ 2 տարի ժամկետով՝ բաց քվեարկությամբ:

6.3. Հանձնաժողովի անդամներից մեկը պետք է լինի Քոլեջի դասախոսական, ուսումնակազմակերպական կամ ուսումնաղաստիարակչական կազմի ներկայացուցիչ:

6.4. Վերստուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող լինել ԳՊՔ ՈւԽ նախագահության, այլ հանձնաժողովներում ընդգրկված անձիք:

6.5. Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ, որը խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել ԳՊՔ ՈւԽ նախագահության և Ընդհանուր ժողովի նիստերին:

6.6. Վերստուգիչ հանձանժողովը հաշվետու է միայն Ընդհանուր ժողովին:

7. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԿԱՄ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1. ԳՊՔ ՈւԽ-ը կարող է վերակազմավորվել կամ լուծարվել ՈւԽ Ընդհանուր ժողովի անդամների ընդհանուր թվի 2/3-ի որոշմամբ:

Scanned with ACE Scanner